

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԵԿՈՂ 1888 ԹԻԻՆ

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն ղերքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական
ՀԱՅՈՒՄՆԵՐԻՆԵՐԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամարայի տանը):
Կայսերական ռուսի թղթերից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գիմն հետեւեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ամուսնական վնասա-
կար սովորութիւնները. Նամակ խմբագրին. Ներ-
քին լուրեր.—ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ԽԱՆՆ ԼՈՒՐԵՐ.
—ՀԱՅՈՒՄՆԵՐԻՆԵՐ.—ԲՕՐՄԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նշանաւոր աղբայրն հան-
դէս վիճանայում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եթէ մեր ժողովրդի մէջ կան մի քանի վերին
աստիճանի վնասակար սովորութիւններ, և հա-
կացութիւններ, որոնք խախտում են նրա կեան-

քի կանոնաւոր զարգացումը, դոցանից ամենագը-
խաւորներից մէկը ամուսնութեան խնդիրն է:
Եւ յիշելով, մեր ժողովրդի մէջ ամուսնութեան վե-
րաբերութեամբ տիրապետում են այնպիսի հրէ-
շուար հասկացողութիւններ, որոնք կարող են
հիմն ի վեր տալով ամեն տեսակ բարոյական
սկզբունքներ և մինչև անգամ ստեղծել Ֆիզիկա-
պէս մաշված և անպէտք սերունդ:

«Մշակ» անցեալ համարում հաղորդված էր,
որ Ղարաբաղի Գորիս գիւղաքաղաքում մի 35
տարեկան մարդ ամուսնացել է մի 12 տարեկան
աղջկա հետ, որի նոյն իսկ կնքանայրը ինքն է
եղել, և այդ ամուսնութեան պատկեր կատարվել է
Շուշուում մի քանիսի ձեռքով: Տարաբաղաբար
այդ դէպքը փոքր չարիքներից մէկը կարելի է հա-
մարել:

Մեր յետ ընկած գիւղերում և գաւառական

և ոկոսան իրենց նպատակին ծառայել, այսինքն
կրթական և ուսումնական գործերով պարագիւր և
հետզհետեւ առաջադիմել և ընդհանուր յարգանք
զրաւել: Այս Միտիթարեանց առաջին արձանայրն
եղած է դեր. Աստուածատուր Բարիկեան արձե-
պիսկոպոս էջմիածնի, որ վախճանեցաւ 1825-ին և
յաջորդ տարին նրա տեղ ընտրվեցաւ դեր. Արիս-
տակէ Աղարեան, որ ամենամեծ ջանք ունեցաւ
վիճենական Միտիթարեան միաբանութեան թէ՛
վախճանական կարգաւորութեան և թէ՛ մտաւոր զար-
գացման վրա և սոյն միաբանութեան բուն ծաղ-
կումը գեր. Աղարեանի իշխանութեան ժամանա-
կից է սկսում: Թէպէտ միաբանութիւնն այս մի-
ջոցին դեռ ևս չատ ստղ նիւթական միջոցների
տէր էր, սակայն սեփական մարդ վաճելի հար-
կաւորութիւնն անհրաժեշտ զգալով և այս մասին
դանազան կողմերից էլ քաջաբերութիւն գտնելով,
վստահեցան մարդ վաճելի չինութեան ձեռնարկել,
որ մեծ հանդիսով կատարվեցաւ Հիմնարկութեան
ներկայ գտնվեցաւ Աւստրիայի կայսերական տո-
նըն և Ֆէրդինանդ կայսրն ու Մարիա Աննա
կայսրուհին իրենց ձեռքով հիման քարը դե-
րին: Այս կատարվեցաւ 1837, հոկտեմբերի 30-ին:
ձեռք 50 տարի է անցած այն թուականից յետոյ
և մեծարգոյ միաբանութիւնն այժմ տօնում է
սոյն հիմնարկութեան 50-ամեայ յօբելանսը: Որո-
շեալ օրից մի շարքով առաջ միաբանութեան
ընդհանրական Արքայն՝ արքեպ. Այտընեան ա-
ռանձին տոմսակներով, որոնք բովանդակում էին
և հանդիսի մանրամասն ծրագիրը, ծանոյց ու
հարկն էր և հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի
1-ը մեծ հանդիսով կատարվեցաւ յօբելանսը: Ա-
ռաջին օրը բացառապէս հայկական աղջիկա-
յին տօնակներով էր և երկրորդ ու երրորդ
օրերը գերմանական և լատինական Աղբայրն
հանդիսի, որ մեծ բազմութիւն էր գրաւել ամեն
կարգի անձանց, և նշանաւոր է եղել հայկական
երաժշտական օրհներգութեամբ և բնասացու-
թեամբ, հանդիսակատար էր նոյն ինքն արքեպ.
Այտընեան. երկրորդ օրուան հանդիսին նախագա-
հում էր վիճենայի արքեպիսկոպոսն, և երրոր-

անկիւններում, անյայտութեան մէջ կատարվում
էին այնպիսի հրէշաւոր ամուսնութիւններ, որոնք
առաջին անգամից նոյն իսկ անհաւատալի են
թուում, և որոնք մի ամենացաւալի զաղափար են
տալիս մեր ժողովրդի բարոյականութեան և դը-
րութեան վրա: Առաջ բերելը մի քանի փաստեր:
Գաւառական հայաբնակ մեծ գիւղերից մէկում
մի քանի ժամանակ առաջ մի 30 տարեկան երե-
տասարդ պսակվեց մի ութ տարեկան աղջկայ
հետ: Այդ քստմնելի պսակի զլիւսաւոր շարժառի-
թը այն էր, որ աղջկայ ծնողները մեռնելով ի-
րանց ամբողջ կարողութիւնը, որը բաղկացած էր
մի տնից, տան միջի իրեղեններից և մի երկու
օրավար հողից, թողել էին իբրեւ ժառանգութիւն
իրանց միակ դստակին,—այդ ութ տարեկան
աղջկան: Օ ժ ի տ ա ռ ո Ր աղջկայ ձեռքը ուղղորդե-
ր շատերը դուրս եկան, և վերջապէս յաղթութիւնը
տարաւ ինչեալ 30 տարեկան երիտասարդը և պը-
սակվեցաւ ութ տարեկան աղջկայ հետ: Սկզբում
աղջիկը, իբրեւ երեխայ, խաղում էր փեսայի տա-
նը, անուանաւոր իր ամուսնուն «հայր»,—բայց մի
փոքր ժամանակից յետոյ ամուսնը կամեցաւ
մտնել իր ամուսնական իրաւունքների մէջ, և
դորա չնորհիւ, չանցաւ երկու տարի, և հաս աղ-
ջիկը միանգամայն ապուշ դարձաւ և վերջում
էլ խելագարութեան նշաններ ցոյց տուեց:
Իոցա պսակը կատարել էր, ի հարկէ, հայ քա-
հանան: Դա սովորական դարձած պսակների մի
տեսակն է:

Յիշեալ տեսակի ամուսնութիւնից աւելի յաճախ
պատահում են հետեւեալ տեսակի ամուսնութիւն-
ները: Կամենայով իր տան մէջ մի հարս ունե-
նալ, որը կատարէր տնային գործերը, գիւղացի
հայրը իր 12 տարեկան աղջկան պսակում է հա-
մագիւղացի 18 կամ 19 տարեկան աղջկայ հետ:
Գիւղացի առողջ և համեստ աղջիկը սկզբում կա-

տարում է համեստութեամբ սկեսորի տանը ա-
ղախնի պաշտօն. նա առաւօտից մինչև երեկոյ
բանում է. նա մի և նոյն ժամանակ հագցնում
կերակրում և իբր մայր խնամում է իր 12 տա-
րեկան ամուսնուն: Բայց, վերջապէս, երիտասարդ
հարսի կանացի զգացմունքներով լցված սիրտը
այլ ևս չէ կարողանում համբերել, նա ամուսին է
պահանջում. նա պատուում է իր համեստութեան
քօղը, և սկեսորից ու անխիղճ հօրից ա մ ու ս ի ն
է պահանջում, և հաս աղբ քօպէից ընտանեկան
խաղաղ կեանքը տակնուվրա է լինում ընտանե-
կան փոթորիկներով:...

Բարեպաշտ հայ գիւղացին այդ պսակն էլ, ի
հարկէ, կատարել է քահանայի ձեռքով:

Դա էլ սովորական դարձած ամուսնների մի
ուրիշ տեսակն է:

Բայց ամուսնութեան ամենապարզ հիմունքնե-
րը մեր ժողովրդի տգէտ մասերում խախտվում են
և ուրիշ եղանակներով:

Ահա մի մարդ, որ իր առաջին կնոջից զաւակ
չունի, բայց անպատճառ ուղում է մի գաւակ, մի
ժառանգ ունենալ. և նա իր յիսուն տարեկան
հասակում իր տունն է բերում, իբրեւ ամուսին:
մի աղքատ ընտանիքի 17 տարեկան կոյս աղջ-
կան, և այդպիսով սկսում է պահել երկու
կին: Իսկ թէ՛ այդ բանը ինչ տպաւորութիւն է
թողնում,—այդ հասկանալի է:

Այդպիսով ահա մի շարք քստմնելի և վնասա-
կար երեւոյթներ գործադրութիւն են գտել մեր ամ-
բոյի մէջ. մի տեղ այդ տեղը երեւոյթը բացատր-
վում է ժառանգ չունենալով, մի ուրիշ տեղ ար-
նային հանգամանքներով, իսկ երրորդ տեղ լոկ
ս ո վ ո Ր ու թ և մ ա ը: Հէնց նոյն այդ սովորութիւ-
նը այժմ մեր գիւղական կեանքում ամուսնու-
թեան մէջ մտցրել է այնպիսի ահաւելի հասկացո-
ղութիւններ, որոնք օրից օր տարածվելով ընդհա-

Այս առթիւ աւելորդ չենք համարում հաղոր-
դել «Մշակ» ընթերցողներին մի այլ հետաքը-
բական լուր, որ նոյնպէս ուշադրութեան արժա-
նի է:

Ինչպէս յայտնի է այս դեկտեմբեր ամսի վեր-
ջը բովանդակ կաթօլիկ աշխարհը պատրաստվում
է մեծ հանդիսով տօնել Հռօմայ ս. պապի, Վտն
ԺԳ-ի 50 ամեայ քահանայութեան յօբելանսը:
Աշխարհի ամեն կողմերից թափվում են մեծաքա-
նակ նուէրներ: Վիճենայի Միտիթարեան Միաբա-
նութիւնն էլ ցանկանում է մասնակցել այս նուի-
րատուութեան և նրա պատրաստած նուէրն մեծ
արժէք ունի աղբայրն—հանգիտական տեսակէտից
և արուեստական գին ունի միանգամայն Վտն
ԺԳ. պապին տրուելիք նուէրն է՝ հայոց Գրիգոր
Ապիրատ կաթօլիկոսի առ իմնովկենտոս Գ.
պապ զրած նամակն և այս վերջինի առ կաթօ-
ղիկոսն ուղղած պատասխանը, գեղեցիկ ալբոմի
մէջ ամփոփված: Թուղթը տպված է նորահատ
երկաթաղի գրերով, իսկ տառերն մեր սովորա-
կանները չեն, այլ միջնադարեան հայկական ծաղ-
կանկար միմիատիւր զարդատուերը. ներկայա-
ցուած է ԺԳ. դարու հայ նկարչութեան արուես-
տը: Ստուգիւ միակն իր սեռի մէջ: Եւ այս ամ-
բողջն բացառապէս գեր. Արքան (Այտընեանի)
գործն և նրա պատրաստածն է: Այս ամսին ըն-
դարձակօրէն պիտի գրվի «Հանդէս Ամօրեայի»
1888-ի յունվար ամսույ թերթում, որի կից կը
լինին և այլ հետաքրքրական տեղեկութիւններ:

Վերջացնում ենք մեր յօդուածն ի սրտէ ու-
րախակցելով այն յարգանքան, որին իրաւամբ
արժանացել են մեր բազմաթիւն Միտիթարեան
հայրերը, վիճենայի նախ և առաջադրվութե-
ան կենտրոնում, և եռանդալից ցանկալով, որ
յիշեալ մեծարգոյ միաբանութիւնը ևս քան դեռ
յառաջադիմէ իր հանրահռչակ և բազմաշխատ
Արքանօր առաջնորդութեան ներքեւ, նպատակելով
և ծառայելով աղբայրն մտաւոր և բարոյական
զարգացման և դաստիարակութեան:

Առաքել Սարկիսյանեանց

*) Թուականը պէտք է ըստ նոր տօմարի ըմբո-
նել, վասն զի վիճենայի Միտիթարեանց ընդու-
նած և գործածում են ոչ թէ հին, (Յուլեան),
այլ նոր, (Գրիգորեան), եւրօպական ճշգրտոյն
տօմարը:

նուր են դառնում: Այժմ նոյն իսկ մեծ դիւղե-
րում, որտեղից հարկւրաւոր երիտասարդներ են
գալիս ըստը՝ աշխատանք անելու համար,
գիւղը վերադառնալով՝ 25, 28, 30 տարեկան
հասակում պատկուծ են 11, 12, կամ 13 տարե-
կան աղջիկներ: Գնտ փիչ չէ պատահում տեմնել,
թէ ինչպէս մի մարդ, որ արդէն քառասուն տա-
րեկան է, և ունի երեխաներ, կնոջ մեռնելու
պատճառով, ամուսնանում է մի 13 տարեկան
աղջկայ հետ: Եւ դոքա ամենքն էլ կարծէք մի-
տեսակ դուարձութիւն են զգում, տեսնելով թէ
ինչպէս 11 կամ 12 տարեկան երեխայ-աղջիկնե-
րը իրանց առաջ անց ու դարձ են անուռ, դո-
ղողալով, աչքերը քաշ գցած. կարծէք այդ մար-
դիկ դուարձանում են, համոզված լինելով, որ այդ
ողորմելի երեխաները՝ իրանց ամուսնիները, ի-
րանց հլու հպատակները, իրանց անխօս և անլեզու
սեփականութիւններն են: Գրանից յետոյ աւելորդ
է խօսել այն մասին, որ շատ և շատ անգամ էլ
այդ բոլոր նշանաբանութիւնները կատարվում են
ծնողների ձեռքով, առանց տղայի և աղջկայ գի-
տութեան և համաձայնութեան, երբ փեսան ուրիշ
քաղաքներում է, և չը գիտէ ձիւ, ինչ է և ինչա-
ցու է իր հարսնացուն: Իսկ հարսնացուն էլ իր
ամուսնու երեսը տեսնում է պակի դիւղերը մի-
այն Այս բանը շատ քիչ տարբերութիւն ունի
«գոտակի» պակից», որը գոյութիւն ունի Հայաս-
տանի մի քանի կողմերում, երբ փեսայի բացա-
կայութեան ժամանակ աղջկան պատկուծ էին փե-
սայի գլխարկի հետ:

Ուրեմն այդտեղ էլ ինչ սէր, ինչ ընտանեկան
կանոնաւոր կեանք, ուրեմն էլ ինչ միայն կնոջ ի-
րաւունքների խնդիրը, ուրեմն ճիշդ պէտք է
փնտռել ապագայ մայրերին, որոնք երեխաներ
պէտք է դաստիարակեն, և այլն և այլն:

Ահա այդպիսի հող է ներկայացնում մեզ մեծ
մասամբ մեր ժողովրդի կեանքը, որտեղ պէտք է
սերմանալ մարդասիրական իրաւունքների և սիրոյ
գաղափարները...

Այդ բոլորը ցաւալի է, ի հարկէ, բայց պէտք է
խոստովանենք, որ այնքան էլ անսպասելի երե-
ւոյթ չէ. մեր ժողովրդի կեանքի կազմակերպու-
թիւնը, նրա կեանքի այժմեան պայմանները կա-
րող էին ծննդն աղջկայի երեւոյթներ, կարող
էին ստեղծել մի այդպիսի մշտնապար դրու-
թիւն և արդէն ստեղծել էլ են: Բայց չը պէտք է
մոռանալ, որ երբ մի ժողովուրդ ինքը այնքան
գիտակցական դարձաւ, չունի, և այնքան չէ
զարգացել, որ կարողանայ ինքն իրան հասկա-
նալ թէ ինչ աւելի հարուստ են տալիս այդ-
պիսի երեւոյթները մի ամբողջ սերնդի բարոյական
և նոյն իսկ ֆիզիկական աճմանը... այդ դէպքում
ժողովրդին ղեկավար պէտք է լինեն նրանք, ո-
րոնք հսկում են այդ բոլորի վրա, որոնք կատա-
րում են ամուսնութեան մէջ ժողովրդի համար
սուրբ դարձած կարգերը և խորհուրդները:

Խ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՈՒՄԱԿՈՒՆ

Թարգմ. նոյնները 22-ին

Այն օրից՝ երբ Արարատականի վիճակի Ղա-
րաբաղի կողմերից հայոց դառնալէտ ներդրութեանց
և հարստահարութեանց տխուր և միանգամայն
սրտաճմբիկ լուր տարածվեցաւ, այն օրից՝ երբ
այնպիսի զգաղութեանց և ամենակերպ զըր-
կանքներին ենթակայ եղող ազգայինները փա-
խուստ տուած գաղանաբարոյ Չիւսապեանու Ա-
մաղ և Մանաղ Վալի խաների անօրինակ ա-
պատկութիւններից ապաստան էին գտել տեղիս
ազգային առաջնորդարանի մէջ, որոնց ողորմելի
վիճակը խորին վիշտ էր պատճառում տեսնողնե-
րին, այն օրից՝ երբ չարագործութիւնը նորից
սկսվեց նոյն անօրէն Ահմատ խանի ձեռ-
քով, սոյն դառնալէտ անցքերի առթիւ դրեթէ
չարունակաբար ազգային պարբերական թերթերի
միջոցով շատ և շատ թերուղէմ խեղաթիւրված
անձիշտ տեղեկութիւններ հրատարակվեցին ծած-
կված ստորագրութեամբ: Նշանակաւոր կարծես
թէ, այսպիսի դէպքերը մի ձեռնտու զուգադի-
պութիւն եղան ոմանց համար այլ և այլ պատ-
ճառներից իրանց վաղմիկ չարակամութեան
թոյն թափել այս և այն անպարտ անձանց
գլխին, անտեղի զրպարտութեամբ շօշափել նը-
րանց պատիւը:

Եւ որովհետեւ այս ցաւալի անցքերի դատա-
տանական գործողութիւնները հալու թէ աւարտ-

վեցան պարսից տեղական բարձր դատաստանի
մէջ՝ յատկապէս իմ միջամտութեամբ, որի նպա-
տակն էր պաշտպանել Ղարաբաղի հայոց հարս-
տահարված ժողովուրդը, ուստի երբ աւարտած է
այդ ծանրադէտ դործը՝ անհրաժեշտ պարտք եմ
համարում ինձ համար ի պաշտօնէ տալ ստուգա-
պատում տեղեկութիւն հետեւանքների մասին
պատուական լրագրիդ միջոցով:

Ղարաբաղի հայոց չարաշէ կեանքը, և հարս-
տահարութիւնները վայրենաբարոյ բարբարոս Չե-
լեապեանու խաներից նոր չէին, այլ շատ վաղե-
մի և պատմական, ուստի խաների բռնակալու-
թիւնը և ողորմելի հայոց ակամայ ստրկութիւնը
գրեթէ սովորական բան էին դարձել հասարակաց
աչքում: Սակայն նրանց չարագործութիւնները
անպատիժ չը թողնելու և միանգամայն ընդ
միշտ հայերից ստրկութեան և զերութեան անտա-
նելի լուծը վերցնելու համար, այլ հայերի մէջ
ինքնաճանաչութեան գաղափար ներշնչելու նպա-
տակով, Առաջնորդական հոգևոր վարչութիւն
միջամտեց այդ ամենադժուարին, բայց միանգա-
մայն ժողովրդական պաշտպանութեան և ազա-
տութեան գործերի մէջ: Առաջին անգամից այն-
քան կարելի եղաւ յաջողեցնել յօգուտ հայոց, որ
խաների ասպատակած կողմուրտը հայոց գիւղե-
րից՝ կարելի եղաւ լիովին յետ տանալ և դարձնել
սեփականատէրերին և խիստ պատժել տալ չա-
րագործներին, որով և պայմանով պարտաւորելով
խաներին, որ չը համարձակվեն սահմանալից աւե-
լորդ արքունի հարկեր և այլ տուրքեր տալնալ:

Սակայն Ղարաբաղի կողմերից դատաւորի ան-
ակնկալ պաշտօնագրով լինելով և մինչև նոր
պաշտօնակալ նշանակվելը մի առ ժամանակ ա-
ռանց կարևոր պաշտպանութեան մնաց Ղարա-
բաղի նահանգը. ուստի Ահմադ խանը յարմար
ժամանակ համարելով, վերստին յարձակվում է
այն ամենայն հայոց գիւղերի վրա, որոնք գտն-
վում են իր կալուածներին մէջ, և զանազան
պատճառաբերութեամբ կը կողոպտէ և տուգանքի
կենթարկէ գիւղականներն և որպէս զի հայու-
թեան նշանները իսպառ անհետացին, կը յանդգնի
ձեռք մկնել դէպի հայոց եկեղեցին և գերեզմա-
նատուները: Ահա այս նոր դէպքերն հարկադրեցին
առաջնորդական վարչութեան աղբուր բողոքնե-
րով դիմել ուր հարկն էր, պահանջելով պատժել
անօրէնին, և ազատութիւն տալ հայոց գիւղերին
սորա բունակալ տեսչութիւնից: Նորին վսեմու-
թիւն Շահաբաթ թուանքաբարաշի ձեռքով շըդ-
թայակալ ուղարկվեցաւ Ահմադ խանը Ղարաբ, ի-
նչիս և առաջ՝ Ղարաբաղի Ահմադ խանին ներ-
կայութեամբ խիստ ծեծի և անարգանքի են-
թարկվելով՝ ապա անընդմիջապէս դարձաւ շըդ-
թայակալ բանտ զրկեցաւ, մեծագումար տուգանք-
ների ենթարկվեցաւ. հայոց մշտնաբեր լիովին յետ
ստացվեցին: Չորս ամեալ բանտարկութիւնից յե-
տոյ դերաստիճան Ամիր-Նիզամի և առաջնորդա-
կան վարչութեան բանակցութեամբ, ի վերջոյ
յաջողեցաւ դատաւորական բարձր իշխանութեան
գրով և հրովարտակով իսպառ հանել հայոց գիւ-
ղերը Ահմադ-խանի բռնակալ տեսչութիւնից, ո-
րոնք այսուհետև հատուցանելու են իրանց հա-
կերը ոչ թէ խանին՝ այլ տէրութեան պաշտօնա-
տան, և խանը ըսաւ չէ ունենալու իշխանական
արտօնութիւն հայոց վրա: Եւ ասան չիորհիւ
այսպիսի արդարասէր տնօրէնութեան բարեմիտ
Ամիր-Նիզամի և օժանդակութեամբ փոխանորդ
պաշտօնակալ Ղուլի-խան Սարգիսի, հայերը այ-
սուհետև վայելելու են հանգստութիւն և ազա-
տութիւն: Խորին շնորհակալութիւն վաճառակա-
նապետ Սարգիս Յովնանեանցին, մահտեսի Սի-
մօն Թումանեանցին և խաչատուր Տէր-Յաջա-
րեանցին, որոնք անկեղծ ջերմասիրտութեամբ
մինչև այս դործի վերջանալը, աշակից գտնվեցան
ինձ թէ խօսքով և թէ գործով իրանց արհես-
կից հարստահարված հայ եղբայրների պատպա-
նութեան դործում: Շնորհակալութիւն ուսուց
դերադիւն հիւպատոս պ. Պետրովին, որը մարդա-
սիրական տեսակէտից՝ միշտ ցոյց է տուել իր
աղբու պաշտպանութիւնը այդպիսի հարստահա-
րութեանց դէպքում, որոնք կը կատարվեն Ահ-
մադ-խանի նման բարբարոս անձանց ձեռքով:

Ահա այդպէս են իմ անկողմնակալ վկայու-
թիւնները և ճիշդ տեղեկութիւնները Ղարաբաղի
հայոց դատաստանական դործերի բարեաշխոյ
վերջաւորութեան մասին, ով որ ինչպէս կամե-
նում է, թող այնպէս գտնէ: Այժմ հրապարակի
վրա դրած՝ դատաստանական շարունակութեան
մէջ են չորս սպանված հայերի դործերը, այն է՝

Որմիտ Նախիջևան Թափայի Սարգիս բահանայինը,
սարեցի Ստեփան Լալաբարեանցինը, միանգամայն
երեսփոխ Գալստինը և Սովորաբար Սարգիս
անունով անձինը: Այս դործերը ոչ սակաւ մտա-
հոգութեան պատճառ են եղել, բայց կը յուսամ
տեսնել բարեաշխոյ ելը և ժամանակին հրատարա-
կութեան կը տամ այդ գործերի հետեւները:

Բայց աւելորդ՝ չեմ համարում դարձեալ կրկնել
մեր պարսկաբնակ համազգայիններին այն կարեկ-
ցական յորդորները և կարևոր զոհուածութիւնները,
որ բեմից և առանին եղանակով շարունակ կրկը-
նել և խօսել եմ. թող լաւ համոզվեն, որ իրանց
ինքնապաշտպանութիւնը, և իրանց ապահովութիւ-
նը պէտք է որոնեն ոչ թէ մի անկերպարան վար-
չութեան մէջ, այլ ազգային բարեմիտ նախան-
ձարնորութեամբ յատկապէս իրանց սիրոյ, մի-
գուտ պարտաճանաչութեան և փոխադարձ լաւ
յարաբերութեան բացակայութեամբ զգալի կերպով
նկատվում է ամենայն տեղ, ուստի և անթիւ են և
անհամար աղետալի չարքները և հալածանքները:

Արարատականի հայոց վիճակի առաջնորդ
Ստեփաննոս Կախկոպոս Մխիթարեանց:

ՆՆՈՒՆԻՆ ԼՈՒՐԻՆ

Պուղիբիմիւր հրատարակած «ДѢЯТЕ ЛѢТ
ТОМУ НАЗАДЪ» (Տաս տարի առաջ) վերնագրով
ուսուցչի գրքից իմանում ենք, որ վերջին ուսու-
թիւրաց պատերազմի վրա կառավարութիւնը
ծախսած է եղել 1 միլիարդ, 39 միլիոն ռուբ-
լուց աւելի (1.039,027,426 ռուբլի):

«Новороссійск. Телеграфъ» լրագիրը, որ հրա-
տարակվում է Օդեսայում, նորերումս տպել է մեր
յայտնի դերասան Աղամանի կենսագրութիւնը,
որի մէջ մեծ համակրութեամբ է խօսվում Աղա-
մանի մասին:

«Волжскій Вѣстникъ» թերթի տպելով այս
տարի Ղազանի համալսարանում ուսանում են 9
հայ ուսանողներ:

«Մշակը» անցնալ տարի զոռաշարել էր իր մի
առաջնորդողով մեր հասարակութիւնը չը հաւա-
տալ այլ և այլ բանկային գրասենեակներ իշխ-
լաններին, որոնք առաջարկում են առնել այլ և
այլ խաղատոմսեր՝ վճարը յետաձգութեամբ (с
разсрочкой) հատուցանելու պայմանով: Բայց չը
նայելով դրան շատեր, մանաւանդ չքաւոր մար-
դիկ ոչ թէ միայն Ռուսաստանում, բայց և նոյն
իսկ մեր հեռաւոր Անդրկովկասում, օրինակ Բա-
գուր մէջ, Շուշում և ուրիշ տեղերում տալիս են
Պետերբուրգի և Մոսկովայի այդ բանկային կան-
տօրաների գործակալներին իրանց վերջին իօպէկ-
ները, կարծելով որ մի 25 ամսից յետոյ ձեռք
են բերելու խոստացած խաղատոմսերը... Սա-
կայն մեծ մասամբ խաբված են մնում և միմիայն
կորցնում են իրանց վերջին փողերը: Այժմ ուսու-
ցաց «Недѣля» շաբաթթերթը մի այնպիսի
բայլ է արել, որ օրինակելի կարող է համարվել
ամբողջ ուսուց պատմութիւն համար, այդ շաբաթա-
թերթը նորերումս հրաժարվել է տպել այդ տե-
սակ բանկային գործակալութիւնների յայտարա-
րութիւնները, չը նայելով որ նրանք շատ լաւ են
վճարում իրանց յայտարարութիւնների համար և
մի և նոյն ժամանակ մանրամասնաբար բացա-
տրել է իր ընթերցողներին այդ բանկային կան-
տօրաների բոլոր խաղախաղութիւնները:

«Русскія Вѣдомости» լրագիրը իր վերջին հա-
մարներում տպված մի շարք յօդուածներով իր
ընթերցողներին ուշադրութիւնն է դարձնում ֆոր-
Ասիայի քրիստոնեաների արդէ անմիջապէս վիճա-
կի վրա:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Հայուհեանց
խորհրդական ընկերութեան վարչութիւնը ա-
ռաջիկայ յունվարի 12-ին Թիֆլիսի ժողովարանի
դահլիճում տալու է յօդուած ընկերութեան պարա-
հանդէս՝ վիճակաբար:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Այստեղի եկեղեցու
վերաշինութեան մասնաժողովը մի քանի պատ-
ճառներով զարգացրել էր իր գործունէութիւնը:

այդ արդիւղ պատճառները վերացել են, և յոյս
ունենք, որ շինութեան գործը նորից կը սկսվի:
Այստեղի բնակիչներից մէկը՝ ընծայեց եկեղեցու
շինութեան համար 500 ռ. արժողութեան քարեր:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են: «Այստեղ այժմ առ-
ևտուրը շատ ընկած դրութեան մէջ է, այն ինչ
անցեալ տարի այս ժամանակ արդէն առևտուրի
կենդանի ժամանակն էր, որով և վաճառականե-
րը իրանց պարտքերի մեծ մասը վճարած էին
սպրանքատէրերին, բայց այս տարի, ընդհակա-
կը, առևտուրը միանգամայն կանգ է առել, և
բաւական նեղ դրութեան մէջ է դրել վաճա-
ռականներին»:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Վերջին ժամանակ
այստեղ երևան եկան հիւանդութիւններ Մանուկ-
ների մէջ տարածված է աչքացաւը, մանաւանդ
բնացաւը, որոնց ելքը, բարեբաղդաբար, աղոյ է
լինում: Երևաց և մի տարափոխիկ ախտ՝ տիֆը:
Այդ ախտով վարակվելու դէպքեր պատահեցան
տեղիս բերդապահ զորքերի և քաղաքիս բնակիչ-
ների մէջ: Ուստի գիւնարական և քաղաքային բը-
ժիկները կազմված մի մասնաժողով միջոցներ
ընդունեց քաղաքի մաքրութեան և պահպանութեան
համար: Գլխաւոր ուշադրութիւնը դարձրած է
կարս-չայի մէջ անմաքրութիւններ թափելը ար-
գելելու վրա»:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են: «Անցեալ նոյեմբերի
մէկին երկտասարդների մի խումբ մի ներկայա-
ցում տուեց յօդուած տեղիս հայոց ուսումնարան-
ներին խաղաքին «Ժապոն», «Քաղցածներ» և «Ինչոյի
թուղը»: Չուտ արդիւնք՝ 65 ռուբլի, յանձնված է
հոգաբարձութեանը: Նոյն նոյեմբերի 22-ին հայ
ուսուցիչներին և մի քանի այլ երկտասարդներից
կազմված թատերասերների խումբը նոյնպէս հա-
յոց ուսումնարանների օգտին ներկայացրեց
«Թուղթ խաղաքոյի կեանքը» դրաման և «Գա-
լալ-Ղադո» կատակերգութիւնը: Ներկայացումը
բաւական աղոյ անցաւ: Այդ երեկոյ՝ չը նայելով
իր առաջին անգամ բեմ դուրս գալուն, լաւ կա-
տարեց իր դերը օրիորդ Բոստանճեանց: Չը նա-
յելով որ այս անգամ թատրոնասերները բեմա-
կան ծախս չանեց ունեցան՝ մօտ 70 ռուբլի, այ-
նու ամենայն, զուտ արդիւնք ստացվեցաւ 120
ռուբլի»:

Թիֆլիսեանցի պ. Թադէոս Վիրեղեան, գրվե-
լով «Մշակին», մի և նոյն ժամանակ հասցրել է
մեր խմբագրութեանը 7 ռուբլի, որը խնդրում է
միացնել այն 3 ռուբլու հետ, որ ուղարկված է
եղել մեզ Բագուից, և այդ փողով ուղարկել
«Մշակի» մի տարեկան օրինակ խանդենդի հայոց
նոր բացված ծխական դպրոցին:

ՂՈՒՐԱՅԻ հայոց եկեղեցական երգչախմբան
դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է, որ կամ
ինքն խմբագրութեանը միացնել, կամ մի ուրիշ անձն,
նուիրէին յօդուած իշխալ ուսումնարանի «Մշակի»
մի տարեկան օրինակ:

Մեզ գրում են ՊԵՏԵՐԲՈՐԳԻՑԻ, որ այս օրերս
«Սօլմանց Գօթօղօ» անուանված տեղում բժշկա-
պետ Ելիսէյ Կարալու է իր 5-րդ դասախօսու-
թիւնը «Կանանց դրութեան մասին արեւելում»:
Այս դասախօսութեան մէջ, ինչպէս հաղորդում է
մեր թղթակիցը, բժշկապետը կը խօսի և հայ ու-
հին երի արդի դրութեան մասին: Թղթակիցը
խոստանում է հաղորդել մեզ մանրամասնութիւն-
ները դասախօսութիւնը լսելուց յետոյ:

ՊԵՏԵՐԲՈՐԳԻՑԻ հայ ուսանողները, ինչպէս մեզ
գրում են, դիտաւորութիւն ունեն իրանց սո-
վորական տարեկան ներկայացումը տալ ներկայ
գեկտեմբեր ամսի 26-ին: Ար խաղան Սունդու-
կեանցի պիեսներից մին:

Ֆիդանդիայի ՀԵԼՍԻՆԳԻՐՍ քաղաքում կա-
նաչք մի մեծ ժողով են կազմել և որոշել են, որ
կանաչք պիտի իրաւունք ունենան մասնակցելու
քաղաքային ընտրութիւններին և ամեն ջանք պի-
տի գործ դնեն իրանց այդ իրաւունքից օգտվելու:

«Православное Обозрѣніе» թերթը խօսելով
միաբնակարան ընկերութեան մասին վրաստանի
թիմում, աւելացնում է. «Այդտեղ ուսուցչական
եկեղեցու քարոզչութեան առաջադիմութիւնը ան-
նշան է, զլիսաւորապէս այն պատճառով, որ ծը-

խաղան հոգևորականութեան մեծամասնութեան թէ՛ մտաւոր և թէ՛ բարոյական ոյժերը համապատասխան չեն քարոզչութեան նպատակին, մինչդեռ այս սուրբ գործի կատարելը բացառապէս տեղական հոգևորականութեան վրա է ընկնում, ուրիշ միութնաբարկան ընկերութիւն չը լինելու պատճառով։

Հրէաների օրգան «Восходъ» անունով հրատարակութիւնը հաղորդում է, որ հարուստ հրէայ, բարձր 21-րդ, 50 միլիոն ֆրանկ է գրել Լօնդօնի բանկերից միում, որպէս զի այդ գումարի տոկոսով Ռուսաստանում բացվին տարրական ուսումնարաններ հրէայ մանուկների համար։ Նոյն հարուստը 1 միլիոն ֆրանկ է տուել ռուսաց կառավարութեանը, այդ գումարը բարեգործական նպատակով գործադրելու համար։

«Արձագանք» շաբաթաթերթի մէջ կարդում ենք, որ Սպասովիչի հրատարակութեամբ վարչապետ լույս տեսնող «Атеум» ընտիր լեհական ամսագրի ներկայ դեկտեմբեր ամսում զետեղված է մի ընդարձակ յօդուած՝ հայոց գրականութեան մասին «Literatura Ormianska» վերնագրով։

Դեկտեմբերի 13-ին, Թիֆլիսի առաջնորդի հրաւերի համաձայն, առաջնորդարանի գահին մէջ հրաւիրված հայ հասարակութիւնը ընտրեց մի յանձնաժողով՝ Զէյթունի հրկիզեալների օգտին բացված հանդանակութեան գործը առաջ տանելու համար։ Այդ յանձնաժողովի անդամներ ընտրվեցան, նախագահութեամբ առաջնորդ Արիստակէս Եպիսկոպոսի, հետեւել անձինք. պ. պ. Ա. Անանեան, Ա. Մանթաշեան, Յ. Զիթախան, Կ. Մուրադեան, Յ. Մէլք-Ղարաբեկեան, Ա. Մէլք-Աղաբեկեան, Մ. Թաւադեան և Թակոյեան։

Դեկտեմբերի 13-ին Թիֆլիսի արական պրօքիմ-նաղիայում կատարվեց տարեկան ակտը, ներկայութեամբ ուսումնական շրջանի հոգաբարձուի և բազմաթիւ հասարակութեամբ Տեսուչ Մարտինով-սկի կարգից պրօքիմնաղիայի 1887 թվի ուսումնական հաշիւը։ Իսկ ուսուցիչներից մէկը մի երկար ճառ խօսեց յայտնի մանկավարժ Պետարօց-ցիի կեանքի և գործունէութեան մասին։ Մանկավարժական խորհրդի որոշման համաձայն հասարակութեան ներկայութեամբ տեղի ունեցաւ աշակերտների պարգևատրելութիւնը. պարգևներ ըստ կարգի ներկայացրեցին Զէյթունից հայեր է-ին։ Ակտի ժամանակ երգեցին մի քանի երգեր։

Տեղական ուսուցիչները հաղորդում են, որ Անտօն Ղարաբեկով, Սօֆիա Տեր-Մկրտչեանի և Տեր-Շմայօնեանի գործի վերաբերութեամբ կառավարող սենատը առաջադրել է Թիֆլիսի դատաստանական պալատին գործադրել իր վճիռը Տեր-Շմայօնեանի վերաբերմամբ, իսկ Ղարաբեկովի գործը յանձնել սենատի քրէական դեպարտամենտի վերաբնու-թեանը։

Դեկտեմբերի 10-ին, 11-ին և 12-ին Թիֆլիսի դատաստանական պալատում քննվեցաւ Վիլմանի սպանութեան յայտնի գործը։ Ընթերցող հասարակութեան յայտնի է, որ 1883 թվին առաջակների մի մեծ խումբ յարձակվեց Զիլմանիի դաւադրի մէջ գտնվող թագաւորական ձիաների դէպօր կառավարիչ Վիլմանի քնակարանի վրա, և սպանեց Վիլմանին, կողոպտելու նպատակով։ Այդ սպանութեան պատճառով նոյն թվականին, դատարանի վճիռ համաձայն, չորս հոգի կալանադրան հանվեցան, իսկ չորս հոգի էլ Սիլիբի քաղաքացւոյն Բայց վերջում երեսց, որ այդ սպանութեան բարդ գործի մէջ խառն են եղել և ուրիշ շատերը, ուստի արդարադատութեան միջնորդի կարգադրութեամբ գործը յանձնվեցաւ Թիֆլիսի դատաստանական պալատին, որի վերջին վճիռ համաձայն, 13 թուրքեր, որոնց մեծ մասը նշանաւոր բեգեր են, դատապարտվեցան և շատերը պէտք է աքսորվեն Սիլիբի։

Ստացանք երէկ ԳԱՅԱԿ քաղաքից հետեւեալ հեռագիրը։ «Կատարելապէս համալրելով «Մշակ» լրագրի № 141-ի առաջնորդողին, ամբողջ սրտից նորհալով ձեռք ենք յայտնում և յոյս ունենում, որ վերահաս լավթողիկոսը կը պաշտպանի։ Եւ միանգամայն սրբազան իրաւունքները Մէլքիսեդէկի և նրա արքանակների պապրիքի վարման հոգին ղեկ է «Մշակ» բազմաթիւ յարգողները։»

Զէյթունի հրկիզեալների օգտին ստացանք պ. Աւետիք Փանեանցից և եղբայրներից 25 ռուբլի։

Պ. Աւետիք Փանեանց և եղբայրները ուղարկելով մեզ տասն ռուբլի խնդրում են այդ փողով ուղարկել «Մշակ» մի տարեկան օրինակը իրանց հայրենի գիւղի՝ Վերին-Աղուլիսի օրիորդաց դպրոցին։

Մեր խմբագրութիւնը արդէն յանձնեց Թիֆլիսի առաջնորդին Զէյթունի հրկիզեալների օգտին ստացած 163 ռուբլի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՌԵՐ

Կ. Պօլիս, 5 դեկտեմբերի

Նոր բան մը չը կայ Պատրիարքի հրաժարականին պատճառ եղող խնդրոց մասին։ Նրանական խորհուրդը կողմանէ վերադառնալու մը մը ներկայացաւ մեծ եպարքոսին և ինքեցեք որ վաղ ընդ փոյթ կարգադրուին խնդիրներն։ Անք եպարքոսը խոստացաւ ներկայացնել խնդիրն յաջորդ աւուր գումարուելը նախարարական ժողովուրդին։ Թաւրոյ օրը նախարարաց ժողովը նկատողութեան կառնու յանձնաժողովին տեղեկագիրն և կորոշէ իրիկ զայն առ պետական խորհուրդն և սպասել նորա վճիռին։ Եւ կարծուի թէ այդ վճիռն յաջորդ շաբաթ կը տրուի։

Իսկ իր խնդիրն կը յուղէ հանրութիւնը։ Մեղքիսեղէկ Կաթողիկոս հրաժարական տուաւ Առաջնորդութեանէ Անցեալ կիրակի նոյեմբերի 29-ին իսկիւրի եկեղեցւոյն մէջ մեծ ցոյց մը եղած է ընդդէմ Առաջնորդին։ Գաւառներու մէջ պատարագի ժամանակ կը յիշուի նաև Առաջնորդին աւանդ, այդ կիրակին պատարագի ժամանակ ժողովուրդին մէջէն «անկեղ Մեղքիսեղէկ» կը կոչեն «չը յիշուի, չը յիշուի»։—Յուզումը կը շատանայ և հալիւ Առաջնորդը կրնայ աղատ կերպով եկեղեցիէն դուրս ելնել, զոգրուելու և դռնաթափի։

Նոյն օրն նորակառուց դպրոցին տարեալը պիտի տօնուէր, Առաջնորդը չէ ուղած ներկայ գտնուել, բայց իւր բարեկամներն յորդորած են ինքեք իջնել ի դպրոցն և անդ նախագահել հանդիսին, բայց հոն ևս ցոյցեր տեղի կունենան։ Թաւրոյ օրը կը կատարուին ձերբակալութիւններ։—Խնդիրն այս անկարգ վիճակի մէջն է։

Փոքր անկարգութիւն մը ևս ի Պօլիս. Տիկին Մատակեան հրաժարական տուաւ աղջկանց Արուստանոցի տեսչութիւնէն։ Անուուսի տիկինը յայտ կարեւոր ծառայութիւն կը մատուցանէր, ամեն տեսակ գործողութիւն առնելով։ Սակայն Նուրիան էֆէնդիին հետ անհամաձայն գտնուելով հարկադրեցաւ հրաժարել։ Այդ հրաժարականին իրական ցաւ պատճառած է Բերայի ամեն շրջանակներու մէջ, որովհետև շատ յոյսեր կը ցընդուէին Սակայն կը յուսացուի որ տիկին Մատակեանի և Նուրիան էֆէնդիի միջև համաձայնութիւն մը գոյացուի։

Յ. Գ. Վերջին պահուն Պատրիարքարանէն կիմանալով թէ հեռագիր մը եկած է իսկիւրէն որով կը հաղորդէ թէ իսկիւրի դաւադական ժողովը նախ միաձայնութեամբ միութեք է Մեղքիսեղէկ Կաթողիկոսին հրաժարականին և պատրաստաւորութեան մը միջոցաւ խնդրած են նորին սրբաբնութիւնէն որ ետ առնու հրաժարականը, բայց Առաջնորդը պնդելով հրաժարականին վրայ Գաւառական ժողովն ալ հրաժարականն ընդունելու է, տեղապահ մը ընտրուել է։ Առաջնորդական նոր ընտրութեան հրահանգ պիտի խրոխտի չայկալ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանց-Յովսէփի կայսրի նախագահութեամբ Վիեննայում կայացած զինուորական խորհուրդը, ինչպէս հեռագրում են Վիեննայից, վճռել է նախապարտադրական միջոցների դիմել և այդ պատճառով արդէն քննութեան էլ է ենթարկել պատերազմական տեսակետից՝ ֆրանսական մի նախադիտ։

—«Fremdenblatt» գոլում է դերմանական լեյտտագի հայրենասիրութիւնը, որը նա արտա-յայտեց զինուորական ծառայութեան վերաբե-րեալ օրինադրի քննութեան ժամանակ։ Սակայն այդ բանի մէջ ուրիշ շատ լուրջ լրագրիներ ոչինչ

չմտաւր հայրենասիրութիւն չեն տեսնում։

—Ֆրանսական հանրապետութեան նոր նախագահ Կարնօ յանձնարարել է Բերլինի ֆրանսական դեսպանին, հաւատացնել զերմանական կառավարութեանը, որ Ֆրանսիան խաղաղասիրական ձգտումներ ունի։

—Փարիզի լրագրիները հաղորդում են հետեւեալ մանրամասնութիւնները ֆրանսական նոր միջնորդների մասին. «Ներքին գործերի այժման միջնորդ Սարիէն ծնվել է 1840 թվին, նա եղել է սկզբում փաստաբան, և ապա պատգամաւոր, ջերմ հանրապետական է և եղել է Ֆրանսիայի և Գորլէի միջնորդութիւնների մէջ ներքին գործերի և արդարադատութեան միջնորդ Արտաքին գործերի միջնորդ Ֆուրանս վաղուց արդէն պետական ծառայութեան մէջ է և իր այժման պաշտօնը կատարել է և նախընթաց միջնորդութեան մէջ։ Արդարադատութեան միջնորդ Ֆալիէր եղել է ներքին գործերի միջնորդ, նա ուսումնասիրել է իրաւաբանութիւնը։ Լուսաւորութեան միջնորդ Ֆալիէն Լէօպոլդ Ֆէ ծնվել է 1828 թվին, նա եղել է սենատոր, իսկ երկուսն էլ երկարագործութեան միջնորդ։ Ֆալիէր ծամանալը պարագիւր է փաստաբանութեանը։ Ջինուորական միջնորդ Լօթէրօ մեծ դեր է կատարել Տունիսի արշաւանքի ժամանակ։ Դո-վային միջնորդ զե-Մադի ծնվել է 1830 թվին, նա սովորել է բժշկութիւն, եղել է պուրլիցիստ, և երբեմն էլ երկարագործութեան միջնորդ։ Հա-ղորդակցութեան ծանապարհների միջնորդ Լալիւ ծնվել է Մարսանում, վաղել է երբեմն միջնորդ պաշտօնը։ Երկարագործութեան միջնորդ Վի-ետտ ծնվել է 1843 թվին, եղել է պուրլիցիստ, և մի ժամանակ յայտնի էր իր հակա-կառավարչա-կան ընթացքով։ Վաճառականութեան միջնորդ Գոարէ մը ծնվել է 1826 թվին, ուսումը աւարտել է իբրեւ ծովային ինժեներ և եղել է երկար ժամանակ պատգամաւոր։ Իսկ միջնորդ-նախագահ Տի-րար ծնվել է 1827 թվին, նա եղել է երկրորդ կայսերութեան կատարի թշնամի, և յայտնի է իբրեւ նշանաւոր պետական գործիչ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերում Բալարիայի պրինց-ինստիտուտ Լու-խտայովին՝ որսի ժամանակ, կծեց մի կատաղած շուն։

—Ամերիկական լրագրիները պատմում են հետեւեալ ծիծաղելի դէպքը մի բժշկի մասին։ Մի օր մի կին եկաւ այդ բժշկի մօտ և յայտնելով որ ինքը ունի քաղցաւ ունի, խնդրեց դեղ նշանակել։ Բժիշկը գրեց դեղատոմսը և տալով հիւանդ կնոջը ասեց. «Գնեցէք այդ դեղը և քսեցէք ձեր մարդու մէջքին։ Եթէ օրեւթիւն կանի, ինձ ասեցէք, որովհետեւ ես էլ սովորացաւ ունեմ»։

—Այս օրերս Թիֆլիսում պատահեց հետեւեալ արտասովոր դէպքով դէպքը։ Մի ֆէլդշերի մօտ, ուր բնակվում է մի տան վերին յարկում, եկաւ մի կին։ Կրանք երկուսը միմեանց սիրում էին։ Այդ մասին տեղեկութիւն տալու ֆէլդշերի հետ զրանից առաջ սիրահարական յարաբերութեան ունեցող մի ուրիշ կին և կամակաւ անպատճառ վրէժխնդր լինել, և պատժել թէ իր սիրածին և թէ իր հակառակորդին։ Առանց երկար մտա-ծելու նա գնաց վերջինի կողքի մօտ, և առա-ջարկեց նրան միասին դնալ և բռնել սիրահար-ներին։ Գիշերվայ ժամը 12-ին, այդ եղբայրը դը-նաց ֆէլդշերի բնակարանը և սկսեց բաղնիկ տունը։ Ֆէլդշերը չիմանալով ինչ անել, վերցրեց անկողնից տալանը (պրատինա), ուրեք իբրեւ թիկ, կապեց իր սիրածին և այդպիսով սկսեց նրան իջնել 15 արշին բարձրութիւնից... Բայց թիկը կտրվեց ու սիրաբոլբոլ կլինեց անհաղին բարձրութիւնից ընկնելով՝ ծանր վնասներ ստա-ցաւ։ Տեղական ուսուցիչները հաղորդում են, որ խեղճին անդադ գրութեան մէջ տարան հի-ւանդանոց, և այդ ահա մայ ԳՅԻ գրութիւնը անյուսալի է։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱՎԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 11 դեկտեմբերի։ Անցեալ շա-բաթվայ ընթացքում տեղեկութիւններ են ստաց-վել այն անկարգութիւնների մասին, որոնք տեղի են ունենել խարկովի, Օդէսայի և Կազանի բարձ-րագին ուսումնարաններում։ Խարկովի տեղեկո-ւթեան ինստիտուտի ուսանողները ժողով կազ-մեցին և անհնազանդութիւն ցոյց տուեցին իշ-խանութեան կարգադրութեանը. իսկ դեկտեմբերի 3-ին, համալսարանի ուսանողները, թուով 30 հո-գի, յանկարծակի լսարանից դուրս գնացին փողո-

ցը, և առաջուց տուած խօսքի համաձայն, միա-նալով մի խումբ տեխնոլոգիների և անասնաբոյ-ժերի հետ, անկարգութիւններ արեցին, կոտորե-լով շինութեան ներքին յարկի պատուհանները։ Նոյն օրը Կազանի ուսանողների ժողով, որոնք խանդարեցին դասախօսութիւնների շարունակու-թիւնը և աղմկալի կերպով պահանջում էին հա-մալսարանական այժմեան կանոնադրութեան փո-խելը։ Վերջապէս Կազանում, դեկտեմբերի 4-ին, համալսարանի ուսանողների և անասնաբուժական ինստիտուտի ուսանողները կազմեցին աղմկալի ժողովներ, համալսարանի ուսանողները նոյն պա-հանջներ արեցին, ինչ որ և Օդէսայից։ Ժողովի ժամանակ ուսանող կոնստանտին Ալեքսեւի իը-փեց ուսանողների տեսչին։ Այդ երեք համալսա-րաններում և խարկովի տեխնոլոգիական ինստի-տուտում պարագլուխները զաղարեցրած են Շատ հանգամանքներ պարզ ցոյց են տալիս, որ այդ բոլոր անկարգութիւնները չարամիտ մարդկանց դրդամբ են եղել։ Ընդհանուր ժողովրդագրութեան նախադիւր կազմված է և ներկայացված ֆի-նանսների միջնորդութեանը։ Այդ ժողովրդա-գրութիւնը կը կատարվի 1888 թվին և 3 միլիոն ռուբլի կը նստի. ժողովրդագրութիւնը կը կա-տարվի տնտեսութեան կամ տան, և ոչ թէ անձինք-ների համեմատ։ «Баржевыя Вѣдомости» լրա-գիրը հաղորդում է, իբր հաստատ փաստ, որ զինուորական վարչութիւնը մինչև այժմ նախա-հաշի կրէդիտից դուրս է ոչ մի ռուբլի չէ խնդ-րել։ «Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ արձակուրդից վերադարձած գերմանական դես-պան Շվեյնից երէկ այցելեց արտաքին գործերի միջնորդ Գրիսին և երկար ժամանակ նրա հետ խօսակցեց։

ՍՕՖԻԱ, 11 դեկտեմբերի։ Կօրուրդի պրինցի գահից հրաժարվելու մասին տարածված լուրերը այստեղ սուտ են համարվում։ Այստեղ են կանչ-ված զօրաբաժինների հրամանատարները, որոնք ամեն օր խորհրդակցութիւն պէտք է ունենան զինուորական միջնորդութեան մէջ։

ԲՕՄԲԵՅ, 11 դեկտեմբերի։ Ազգայնական միջնորդ մի պրօկլամացիա հրատարակեց, որով խոստա-նում է ներել ապստամբներին, լաւ վարվել նը-րանց հետ, և վերադարձնել նրանց յարձուինս դը-րաւած կալերը։

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 դեկտեմբերի։ Պետերբուրգ հասաւ լուրը Բանդօք Զերլիլ։ Երէկ վախճանվեց ծովապետ Կօզակովիչ։ Լրագրիները հաղորդում են, որ պետական խորհուրդը կերտելով վրա տուրքը նշանակել է 40 կօպէկ պուլլին, և նաւ-թային արդիւնաբերութեան ժամանակ ստացվող իւրի պուլլին՝ 30 կօպ. այդ նիւթերը արտասահ-ման արտահանելու «ժամանակ» տուրքը յետ կը դարձնվի։ «С. Петербургскія Вѣдомости» լրա-գիրը հաղորդում է, որ մշակված է դիւզական բանկիրի նոր կանոնադրութեան ծրագիր։ Մտա-գրութիւն կայ ամենից առաջ միծմայնել հիմնա-կան դրամագլուխը և փոխել փոխառութեան պայմանները։

ՎԻԵՆՆԱ, 12 դեկտեմբերի։ Կալնօկի օրգան «Fremdenblatt» յայտնում է, որ բողոքական հարցի վերաբերեալ բանակցութիւնների, և այդ հարցը վճելու նպատակով կօնֆերենցիա գումա-րելու մասին Վիեննայի կառավարական բարձր շրջաններում ոչինչ յայտնի չէ։

ԲՈՒԽԱՐԵՍ, 12 դեկտեմբերի։ Պատգամաւորնե-րի ժողովում Բրատսկոյ յայտնեց, որ պատերազմի դէպքում Բուլինիան կարող է դուրս բերել երեք հարիւր հազար զօրք։ Տասն միլիոն ֆրանկի ար-տակարգ կրեդիտ է բացված, հարիւր հազար մա-դաղնային հրացաններ և դնալներ առնելու համար։ Նորակոչ զինուորների իւրաքանչիւր տուր-վայ կօնստիտուցիա է մեծացրած է մինչև 16,500։

ՊՐԱԳԱ, 12 դեկտեմբերի։ Զեխերի օրգան «Դարօզնից լիստի» լրագիրը, սերբիայի թագաւո-րին, նրա վերջին ճառի առիթով, խաղաղեք է անուանում, և ասում է որ նա ևս նոյն վիճակին կենթարկվի, որը սպասում է Կօրուրդի պրինցին։

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 դեկտեմբերի։ «Русское Судо-ходство» ամսագրի խմբագիր-հրատարակիչ Մեցին թոյլ է տրված այդ ամսագիրը շաբաթաթերթի դարձնել, պահելով նախկին տարեկան բաժա-նորդագինը, այն է 8 ռուբլի։

ՓԱՐԻՉ, 12 դեկտեմբերի։ Գերուլեդի փոխարէն հայրենասէրների միութեան նախագահ է ընտր-ված՝ վերադննդ պալատի խորհրդական Ֆերի դը-Կլօ։

